

**ՀԱՅԿԱԶԵԱՆ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՒԻ ԼԷ. ՀԱՏՈՐԻ
ՇՆՈՐ ՀԱՆՐԱՒԱԸ ՊԵՅՐՈՒԹԻ ...**

Հինգշաբթի, 5 Հոկտեմբեր 2017ին, Հայկազեան Համալսարանին մէջ տեղի ունեցաւ *Հայկազեան Հայագիտական Հանդէսի* ԼԷ. (37րդ) հատորին շնորհանդէսը, ներկայութեամբ Մ.Ա.Հ.Ա.Ե. Միութեան նախագահ Վեր. Մկրտիչ Գարակէօզեանի, Համալսարանի նախագահ Վեր. Դոկտ. Փօլ Հայտօսթեանի, կրթական ու մամլոյ մշակներու եւ բարեկամներու:

Մեծ բացական, ցաօք սրտի, Հ.Հ. *Հանդէսի* նախորդ 26 տարիներու նուիրեալ պատասխանատու խմբագիր Հ. Անդրանիկ Ծ. Վրդ. Կոանեանն էր, որ վախճանած էր օրեր առաջ: Հայր Անդրանիկ, որ 1969ին միացած էր Հայկազեանի ընտանիքին իբրեւ գրաբարի դասախօս, 1991ին ստանձնած էր *Հանդէսի* պատասխանատու խմբագրի պաշտօնը, եւ իր գործակիցներուն հետ կրցած էր ապահովել անոր անխափան հրատարակութիւնը: Իր խմբագրապետութեան օրերուն, *Հանդէսը* ձեռք ձգած էր բովանդակային հարստութիւն եւ որակային խորք, դառնալով փնտռուած հրատարակութիւն հայագիտական շրջանակներու մէջ: Հ. Անդրանիկին վախճանումին առթիւ, շնորհանդէսի կազմակերպիչները պարտք սեպած էին ոգեկոչելու անոր յիշատակը, համալսարանէն ներս վարդապետին տարիներու գործունէութիւնը ցոլացնող լուսանկարներու ցուցադրութեամբ: Սեղաններու վրայ ներկայացուած էին նաեւ Հ. Անդրանիկին հեղինակած ու թարգմանած գիրքերը, խմբագրած *Մասիս* շաբաթաթերթէն նմուշներ:

Ապա *Հանդէսի* պատասխանատու քարտուղար Դոկտ. Անդրանիկ Տագէսեան լուսանկարներով ներկայացուց Հ. Կոանեանի Հայկազեան Համալսարանի մէջ ունեցած գործունէութեան զանազան դրուագներ, շեշտը դնելով մանաւանդ 1991-2016 տարիներուն:

Շնորհանդէսին բացման խօսքը կատարեց համալսարանի Հայագիտական ամբիոնի վարիչ Դոկտ. Նանոր Գարակէօզեանը, որ ի պաշտօնէն անցեալ տարի միացած էր խմբագրակազմին: Ան, ողջունելէ ետք ներկաները, կեդրոնացաւ *Հանդէսին* աշխատանքային իրաւաստութիւններուն վրայ, շեշտելով որ «միացեալ ուժերով աշխատիլը, փորքեր մասնագիտութիւններէ հմտութիւններ քաղելը եւ բազմակողմանի մօտեցումներով խմբագրելը անհրաժեշտ ազդակներ են մանաւանդ հայագիտութեան բնագաւառին մէջ, ուր աշխատանքներն ու հետազոտութիւնները... կ'իրականան բազմադասական (multidisciplinary) ճիգերով եւ միջմասնագիտական հաղորդակցութեամբ»: Ապա, Դոկտ. Գարակէօզեան հակիրճ ներկայացուց հատորը, որ կը բաղկանայ 18 յօդուած-ուսումնասիրութիւններէ, 5 քննարկումներէ, 3 հրապարակումներէ, 7 հաղորդումներէ, 6 գրախօսա-

կաններէ եւ 16 մահազրականներէ՝ գրուած Հայաստանէն եւ Սփիւռքէն 43 տարբեր աշխատակիցներու կողմէ:

Օրուան քանախօսն էր Լիբանանի մէջ Հայաստանի դեսպանատան կցորդ, աստուածաբանութեան մասնագէտ, փիլիսոփայական գիտութիւններու թեկնածու Դոկտ. Վլատիմիր Պօղոսեանը, որ ներկայացուց Սփիւռքի հայագիտական կեդրոններուն մասին համապարփակ զեկուցում մը, համարելով որ հայագիտութիւնը համաշխարհայնացման դէմ պայքարի լաւագոյն զէնքերէն մին է, որ «*պէտք է զարգանայ ժամանակի պահանջներին համահունչ*»: Պօղոսեան արագ ակնարկով ներկայացուց նախորդ դարերու հայագիտական կեդրոններու գործունէութիւնը, կարեւորելով յատկապէս Մխիթարեաններու աշխատանքը: Իսկ Ի. դարուն՝ ան դրուստեց Հայաստանի Ակադեմիային, Մատենադարանին, Համալսարանին եւ այլ գիտական հաստատութիւններու հսկայական նպաստը հայագիտութեան հօգիւ վերելքին: Պօղոսեան նշեց, թէ այսօր աշխարհի տարբեր երկիրներու մէջ կը գործեն 107 հայագիտական կեդրոններ, ամբիոններ, բաժիններ, ծրագիրներ եւ դասընթացքներ: Ոմանց պարագային կը նկատուի նահանջի երեւոյթ մը (մասնագէտներու պակաս, տնտեսական տագնապ), ոմանք ալ կ'արձանագրեն դրական տեղաշարժեր: Պօղոսեան կարեւորեց Հայկազեան Համալսարանի դերը: Համալսարանին հայագիտական ամբիոնին դասաւանդութիւնները, Հայկական Սփիւռքի Ոսումնասիրութեան Կեդրոնին ծառայած գործունէութիւնները եւ գործակցութիւնները, *Հայկազեան Հայագիտական Հանդէսի* հրատարակութիւնը եւ աշխատակիցներու մեծ պարագիծը, ըստ բանախօսին «*մեծապէս նպաստում են հայագիտութեան եւ հայապահպանութեան զարգացմանը*»: Պօղոսեան նշեց, որ «*Հայագիտութիւնը որպէս գիտական համակարգ եւ պեղական-ազգային քաղաքականութեան ու գաղափարախօսութեան ծրագրի էական բաղադրիչ՝ մեծ կարեւորութիւն է ստանում յարկապէս Հայաստանի Հանրապետութեան եւ Արցախի Հանրապետութեան անկախութեան պայմաններում*»: Բանախօսը կարեւորեց, որ հայրենիքի եւ Սփիւռքի հայագիտական կեդրոնները, բոլոր ուղղութիւններով համաշխարհային գիտութեան հետ համընթաց քալելով, իրենց նուաճումները պէտք է ի սպաս դնեն հայոց պետականութեան ամրապնդումին ու անվտանգութեան ապահովումին, ինչպէս նաեւ հայապահպանութեան եւ հայկական քաղաքակրթութեան տարածումին:

Համալսարանի նախագահ Վեր. Դոկտ. Հայտօսեան, իր խօսքին մէջ ոգեկոչեց Հայր Անդրանիկի յիշատակը. ան նշեց, թէ վարդապետին ներկայութիւնը ունէր ազնուացնող, զարգացնող, հայացնող, քաջալերող եւ աշխատանքի մղող ազդեցութիւն բոլորին մէջ: Ապա, նախագահը յայտնեց, որ Հայկազեանի առաքելութեան մաս կը կազմէ յատկապէս հայա-

գիտական ուսումնասիրություններու ոլորտը, քանի որ հայագիտութիւնը իսկապէս գիտութիւն է, իսկ գիտութիւնը «ընդհանրապէս հայու զարգացման նպաստող վարք է»: Ան յիշեցուց, որ «համալսարաններ եւ ժամանակակից քաղաքակրթութիւններ առանց ուսումնասիրութեանց եւ ուսումնասիրութեան կեդրոններու չեն կրնար իրենց օրերու համապատասխան մրաօնողութիւն կամ ուսումնական ծրագիր եւ գիտութիւն գոյացնել»: Այս պարունակին մէջ, վերապատուելին կարեւորեց Հանդէսը յատկապէս իբրեւ հասցէն այն հայագէտներուն, որոնք արեւմտահայերէնով աշխատասիրութիւններ կը կատարեն: Հուսկ, նախագահը շնորհակալութիւն յայտնեց Հանդէսի խմբագրական կազմին եւ յաջողութիւն մաղթեց անոնց աշխատանքներուն:

Շնորհանդէսը ասարտեցաւ ամանդական կարկանդակի հատումով:

Հարկ է նշել, որ Հայկազեան Հայագիտական Հանդէսը ունեցաւ իր միջազգային արժեքափերու համապատասխանութեան շարաթիւը (ISSN):

...ԵՒ ԵՐԵՒԱՆԻ ՄԷՋ

ՀՀ Սփիւռքի նախարարութեան եւ Պէյրութի Հայկազեան Համալսարանի նախաձեռնութեամբ Դեկտեմբերի 13ին Սփիւռքի նախարարութիւնում տեղի ունեցաւ Հայկազեան Հայագիտական Հանդէսի 37րդ համարի շնորհանդէսը:

Ողջունելով ներկաներին՝ Սփիւռքի նախարար Հրանուշ Յակոբեանը մասնատրապէս նշեց. «Հայկազեան Համալսարանը 2 փարի առաջ բոլորեց իր 60ամեակը, եւ այդ փարիների ընթացքում կարողացել է Միջին Արեւելքում գիտակրթական, դաստիարակչական գործունէութիւն իրականացնել: Նախարարութեան սրբեղծման առաջին օրից Հայաստան-Սփիւռք կապերի, գործակցութեան վերաբերեալ առաջին դասախօսութիւնը կարդաց Հայկազեան Համալսարանի նախագահ, վերապատուելի Փոլ Հայտոսեանը: Մենք փարիներ շարունակ համագործակցում ենք հայագիտութեան բնագաւառում: Սփիւռքի նախարարութեան աշխատակիցներից մի քանիսը սովորել, վերապատրաստուել են Հայկազեան Համալսարանում, եւ այդ ամիսների ուսումնառութիւնը բարերար ազդեցութիւն է գործել նրանց մասնագիտական գիտելիքների եւ գործունէութեան վրայ»: Նախարարը կարեւորեց սերտ համագործակցութեան արդիւնքում Հայկազեան Համալսարանում Սփիւռքի հետազօտութիւնների կենտրոնի ստեղծումը եւ շնորհակալութիւն յայտնեց համալսարանին, Հանդէսի խմբագրակազմին լուրջ գիտական գործունէութեան, հայապահպան առաքելութեան, հայ երիտասարդներին Լիբանանում կրթելու, հայ ուսուցիչներ պատրաստելու համար:

Այնուհետև ելոյթ ունեցաւ Մերձատր Արեւելքի Հայ Աւետարանական եկեղեցիների Միութեան Կենտրոնական Մարմնի ատենապետ, Հայկազեան Համալսարանի նախագահ, վերապատուելի Փոլ Հայտօթեանը: «Նախարարութիւնը նախարարի եւ աշխատակիցներու ջանքերով դարձաւ ոչ միայն հարազատ Կոնստանտնուպոլսի համար, այլեւ աշխատանքի եւ գործակցութեան հարթակ: Նախ կ'ուզեմ շնորհատրել նախարարութեանը Հայաստան-Սփիւռք ճորդ համահայկական համաժողովը բարձր մակարդակով կազմակերպելու եւ արդիւնաւէտութեան համար: Վերջին տարիներուն Սփիւռքի մէջ արեւելահայերէնով եւ արեւմտահայերէնով գրողներու, հետազոտողներու թիւը նուազած է: Յաճախ մեզի կ'ըսեն որ գուրգուրանք այն ամէնուն որ ունինք, որովհետեւ կրնանք շատ հեշտութեամբ կորսնցնել: Սակայն Հայագիտական Հանդէսի ուղերձներէն մէկն էլ այն է, որ ոչ միայն գուրգուրանք մեր ունեցածին, այլեւ չնահանջենք մեր մասնագիտական գործունէութեան մէջ»:

ՀՀ ԳԱԱ Հայագիտութեան եւ Հասարակական Գիտութիւնների Բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար Եւրի Սուվարեանը շեշտեց, որ Հայկազեան Հայագիտական Հանդէսի ստուարածաւալ այս հատորը ոչ միայն գիտական նշանակութիւն ունի, այլեւ հայապահպան մեծ առաքելութիւն: Սուվարեանը կարեւորեց նաեւ ԳԱ Ակադեմիայի եւ Հայկազեան Համալսարանի միջեւ կնքուած համագործակցութեան համաձայնագիրը:

ԵՊՀ ռեկտոր Արամ Սիմոնեանը իր ելոյթում նշեց. «Կարեւոր միջոցառում է այսօր եւ շատ խորհրդանշական, որովհետեւ Հանդէսն այն քիչ հրապարակութիւններից է հայագիտութեան ոլորտում, որ ցոյց է տալիս Հայաստանի եւ Սփիւռքի հայագէտների միասնութիւնը: Գողորիկ մի համալսարան է Հայկազեան Համալսարանը, ով եղել է այնպէս, ունեցել է այն զգացումը, որ համալսարանը Սփիւռքում ե՛ւ ոգով, ե՛ւ գործունէութեամբ բացառիկ երետոյթ է գիտական, կրթական կեանքում: Հայկազեան Համալսարանը շարունակում է գտնուել իր բարձրութեան վրայ, եւ այս ժողովածուն դրա վառ ապացոյցն է: Յիշէք, որ երեւանի Պետական Համալսարանը ձեր կողքին է»: ԵՊՀ ռեկտորը ցաւով ընդգծեց, որ հայագիտական հետազոտութիւնների բնագաւառում մենք տեսնում ենք որոշակի յետընթաց, եւ հակահայագիտական քարոզչութեան ծաւալները գնալով մեծանում են:

Ըստ Հայկազեան Համալսարանի Հայկական Սփիւռքի Ուսումնասիրութիւններու Կեդրոնի տնօրէն, Հանդէսի պատասխանատու քարտուղար Անդրանիկ Տազեւեանի՝ Հանդէսի հիմնադիրներն առաջին իսկ օրից ցանկացել են Հայաստանի եւ Սփիւռքի միջեւ հայագիտական կամուրջ ստեղծել, եւ այն այսօր էլ իր երթի մեջ մնում է հաստատական:

ՀՀ ԳԱԱ Հրաչեայ Աճառեանի Անուան Լեզուի Ինստիտուտի տնօրէն Վիկտոր Կատվալեանը իր ելոյթում նշեց, որ հատորի էջերում տեղ են գտնում նաեւ մեր ժամանակների ազգային կարեւոր իրադարձութիւնները, եւ այս հրատարակութիւնը ծգտում է հայ գիտական կեանքի միասնութեան: «Հանդէսի այս համարում տեղ է գտել նաեւ նախարար Հրանուշ Յակոբեանի 'Հայ Ինքնութեան Հիմնահարցեր' յօդուածը, որտեղ հեղինակն անդրադառնում է հայ ինքնութեան առջեւ ծառացած մարտահրաւերներին եւ դրանց յաղթահարման ուղիներին»:

Ելոյթներ ունեցան նաեւ Մ. Մաշտոցի Անուան Մատենադարանի տնօրէնի պաշտօնակատար Վահան Տէր-Ղեւոնդեանը, ԵՊՀ Պատմութեան Ֆակուլտէտի դեկան Էդիկ Մինասեանը, Հայաստանում Հանդէսի ներկայացուցիչ Արծուի Բախչինեանը, Վէմ Համահայկական Հանդէսի գլխաւոր խմբագիր Գէորգ Խոտինեանը, Ձայն Համշէնական ամսաթերթի գլխաւոր խմբագիր Սերգէյ Վարդանեանը:

Ներկաներին ողջունեց Արարատեան Հայրապետական թեմի «Ծաղկազարդ» համախումբը: Սփիւռքում հայկական արուեստը տարածելու, այդ ոլորտում ստեղծագործական եւ կատարողական բարձր վարպետութեան, Հայաստան-Սփիւռք գործակցութեան զարգացման գործում զգալի ներդրում ունենալու համար համախումբը պարգեատրուեց Սփիւռքի նախարարութեան «Կոմիտաս» մեդալով:

Հայերն Այսօր

